17672

ԽՍՀՄ 7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵԻ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

# ԽՍՀՄ ԻՐԱՎԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

324
Խ-11

ՎՐ. Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՒՍՈՒՄԱՍ—1937

Ղ78039
324
Խ-11
15 JAN 2010
26 SEP 2006

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

# ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՐ. Կ (բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԿՈՒՍՀՐԱՏ — 1937

17672

11 SEP 2013

# «ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԽՍՀՄ 7-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն
ՎՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրությունը»։

ԽՍՀ Միության Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀ Միության Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա—Կրեմլ
9 հուլիսի, 1937 թ.

33993-62

ԳԼՈՒԽ 1.

## ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 1.—ԽՍՀՄ Սահմանադրության 134-րդ հոդվածի հիման վրա ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ։

ՀՈԴՎԱԾ 2.—ԽՍՀՄ Սահմանադրության 135-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրություններն ընդհանուր են. ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնք դարձել են 18 տարեկան, անկախ ռասայական ու ազգային պատկանելիությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստոկեցությունից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և անցյալ գործունեությունից, իրավունք ունեն մասնակցելու պատգամավորների ընտրություններին և ընտրվելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում, բացի խելագարներից և այն անձերից, վորոնց դատարանը դատապարտել է զրկելով ընտրական իրավունքներից։

ՀՈԴՎԱԾ 3.—ԽՍՀՄ Սահմանադրության 136-րդ հոդվածի հիման վրա պատգամավորների ընտրությունները հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով։

ՀՈԴՎԱԾ 4.—ԽՍՀՄ Սահմանադրության 137-րդ հոդվածի հիման վրա կանայք ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասարապես։

ՀՈԴՎԱԾ 5.—ԽՍՀՄ Սահմանադրության 138-րդ հոդվածի հիման վրա Կարմիր Բանակի շարքերում գտնվող քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես։

ՀՈԴՎԱԾ 6.—ԽՍՀՄ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա ընտրությունների ժամանակ թեկնածուներն առաջադրվում են ըստ ընտրական շրջանների։

ԳԼՈՒԽ 2.

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7.—Ընտրողների ցուցակները կազմում է քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդը, իսկ շրջանների բաժանվող քաղաքներում՝ շրջանային Խորհուրդը, գյուղական վայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական (ստանիցայի, գյուղի, խուտորի, ղշլաղի, աուլի) Խորհուրդը։

ՀՈԴՎԱԾ 8.—Ընտրողների ցուցակների մեջ մտցվում են ընտրությունների օրը 18 տարին լրացրած այն բոլոր քաղաքացիները, որոնք ընտրական իրավունք ունեն և ցուցակները կազմելու մոմենտին ապրում են (մշտապես կամ ժամանակավորապես) տվյալ Խորհրդի տերիտորիայում։

ՀՈԴՎԱԾ 9.—Ընտրողների ցուցակների մեջ չեն մտցվում դատավճիռներով ընտրական իրավունքներից զրկված անձերը՝ դատավճռով սահմանված ընտրական իրավունքներից զրկվելու ամբողջ ժամկետի ընթացքում, ինչպես և այն անձերը, որոնք օրենքով սահմանված կարգով խելագար են ճանաչված։

ՀՈԴՎԱԾ 10.—Ընտրողների ցուցակները կազմվում են այբբենական կարգով ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի, մատնանշելով ընտրողի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը և բնակության վայրը, և ստորագրվում են աշխատավորների պատգամավորների Խորհրդի նախագահի ու քարտուղարի կողմից։

ՀՈԴՎԱԾ. 11.—Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել ավելի քան մեկ ընտրական ցուցակի մեջ։

ՀՈԴՎԱԾ 12.—Զորամասերում և զորքերի միավորումներում գտնվող ընտրողների ցուցակները կազմում է հրամանատարությունը՝ հրամանատարի և զինվորական կոմիսարի



ստորագրություններով։ Մյուս բոլոր զինվորական ծառայողներն ընտրողների ցուցակների մեջ մտցվում են աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդների կողմից ըստ բնակության վայրի։

ՀՈԴՎԱԾ 13.—Ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների պատգամավորների Խորհուրդը փակցնում է ընտրողների ցուցակներն ընդհանուրի դիտման համար կամ ապահովում է ընտրողների հնարավորությունը ծանոթանալու այդ ցուցակներին խորհրդի շենքում։

ՀՈԴՎԱԾ 14.—Ընտրողների ցուցակների ընդդիրը համապատասխան կերպով պահվում է աշխատավորների պատգամավորների Խորհրդում և զինվորական մասում, կամ զորքի միավորման մեջ։

ՀՈԴՎԱԾ 15.—Յեթե ընտրողն ընտրողների ցուցակն հրապարակվելուց հետո մինչև ընտրությունների օրը փոխում է իր բնակավայրը, աշխատավորների պատգամավորների համապատասխան Խորհուրդը «քվեարկելու իրավունքի վկայական» է տալիս նրան կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և ընտրողների ցուցակում նշում է՝ «մեկնեց». մշտական կամ ժամանակավոր նոր բնակության կետում ընտրողը մտցվում է ընտրողների ցուցակի մեջ, ներկայացնելով ինքնության վկայականը, ինչպես և «քվեարկելու իրավունքի վկայականը»։

ՀՈԴՎԱԾ 16.—Ընտրողների ցուցակի մեջ յեղած անճշտության մասին (ցուցակների մեջ չմտցնելը, ցուցակներից բացառելը, ազգանվան, անվան, հայրանվան աղավաղումը, ընտրական իրավունքներից զրկված անձերին վոչ ճիշտ կերպով ցուցակների մեջ մտցնելը) դիմում տրվում է աշխատավորների պատգամավորների այն Խորհրդին, որը հրապարակել է ցուցակը։

ՀՈԴՎԱԾ 17.—Աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է ընտրողների ցուցակի մեջ յեղած սխալի վերաբերյալ յուրաքանչյուր դիմում քննել 3 որվա ժամկետում։

ՀՈԴՎԱԾ 18.—Ընտրողների ցուցակի մեջ յեղած սխալի վերաբերյալ դիմումը քննելուց հետո աշխատավորների պատգամավորների Խորհրդի գործադիր կոմիտեն պարտավոր է կամ անհրաժեշտ ուղղումներ մտցնել ընտրողների ցուցակի մեջ, կամ գրավոր տեղեկանք տալ դիմողին՝ նրա դիմումը մերժելու պատճառների մասին. աշխատավորների պատգամավորների Խորհրդի վորոշմանը համաձայն չլինելու դեպքում դիմողը կարող է գանգատ տալ ժողովրդական դատարանին։

ՀՈԴՎԱԾ 19.—Ժողովրդական դատարանը 3 որվա ընթացքում պարտավոր է դատական դռնբաց նիստում, կանչելով դիմողին և Խորհրդի ներկայացուցչին, քննել ցուցակի մեջ յեղած սխալի վերաբերյալ գանգատը և անհապաղ հայտնել իր վորոշումը, ինչպես դիմողին, այնպես և Խորհրդին։ Ժողովրդական դատարանի վորոշումը վերջնական է։

ԳԼՈՒԽ 3.

## ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 20.—ԽՍՀՄ Սահմանադրության 34-րդ հոդվածի հիման վրա Միության Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ քաղաքացիներն ըստ ընտրական շրջանների։

ՀՈԴՎԱԾ 21.—Միության Խորհրդի ընտրություններին ընտրական շրջանը կազմվում է շրջանին 300.000 բնակիչ սկզբունքով։ Միության Խորհրդի ընտրություններին յուրաքանչյուր ընտրական շրջան ուղարկում է մեկ պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 22.—ԽՍՀՄ Սահմանադրության 35-րդ հոդվածի հիման վրա Ազգությունների Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ քաղաքացիներն ըստ ընտրական շրջանների։ Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական շրջանը կազմվում է հետևյալ սկզբունքով. 25 շրջան յուրաքանչյուր միութենական հանրապետության մեջ, 11 շրջան յուրաքանչյուր ինքնավար հանրապետության մեջ, 5 շրջան յուրաքանչյուր ինքնավար մարզում, և 1 ընտրական շրջան յուրաքանչյուր ազգային շրջանում։ Ազգությունների Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր ընտրական շրջան ուղարկում է մեկ պատգամավոր։

ՀՈԴՎԱԾ 23.—Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական շրջանները կազմում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը։

ՀՈԴՎԱԾ 24.—Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական շրջանների ցուցակը հրապարակում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, միաժամանակ նշանակելով ընտրությունների որը։

ԳԼՈՒԽ 4.

## ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 25.—Ընտրական բյուլետեններն ընդունելու և ձայները հաշվելու համար ընտրական շրջանների մեջ մտնող քաղաքների և շրջանների տերիտորիան բաժանվում է Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար ընդհանուր ընտրական տեղամասերի։

ՀՈԴՎԱԾ 26.—Քաղաքներում ընտրական տեղամասեր կազմում են աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդները, շրջանների բաժանված քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդները, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդները։

ՀՈԴՎԱԾ 27.—Ընտրական տեղամասերը կազմվում են վոչ ուշ, քան ընտրություններից 45 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 28.—Ցերկու հազարից վոչ ավելի բնակիչ ունեցող գյուղխորհրդի տերիտորիան, վորպես կանոն, կազ-

մում է ընտրական մեկ տեղամաս. 500-ից մինչև 2.000, բայց վոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր ստանիցայում, գյուղում, ղշլաղում, աուլում կազմակերպվում է առանձին ընտրական տեղամաս։

ՀՈԴՎԱԾ 29.—Հյուսիսային և արևելյան հեռավոր շրջաններում, ուր գերակշռում են մանր ավանները, թույլ է տրվում կազմակերպել ընտրական տեղամասեր 100-ից վոչ պակաս բնակիչների քանակով։

ՀՈԴՎԱԾ 30.—Քաղաքները, արդյունաբերական կետերը, ինչպես և 2.000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերը և գյուղխորհրդի տերիտորիան բաժանվում են ընտրական տեղամասերի՝ բնակչության 1.500—2.500 մարդուն մեկ ընտրական տեղամաս հաշվով։

ՀՈԴՎԱԾ 31.—Զորամասերը և զորքերի միավորումները կազմում են առանձին ընտրական տեղամասեր 50-ից վոչ պակաս և 1.500-ից վոչ ավելի ընտրողների թվով, վորոնք մտնում են ընտրական շրջանը զորամասի կամ զորքի միավորման վայրում։

ՀՈԴՎԱԾ 32.—50-ից վոչ պակաս ընտրողներ ունեցող նավերը, վորոնք ընտրությունների որերին կգտնվեն ճանապարհին, կարող են կազմել առանձին ընտրական տեղամասեր, վորոնք մտնում են ընտրական շրջանների մեջ ըստ նավի գրանցման վայրի։

ՀՈԴՎԱԾ 33.—50-ից վոչ պակաս ընտրող ունեցող հիվանդանոցներին, ծննդատներին, սանատորիաներին, հաշմանդամների տներին կից ստեղծվում են առանձին ընտրական տեղամասեր։

ԳԼՈՒԽ 5.

## ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 34.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է աշխատավորների հասարակական կազմակերպություններ-



ի և ընկերությունների ներկայացուցիչներից ու հաստատվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության կողմից, միաժամանակ հրապարակելով ընտրությունների որվա մասին։

ՀՈԴՎԱԾ 35.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 12 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 36.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

ա) ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում հեռևում է ընտրությունների ընթացքում «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» անշեղ կատարմանը.

բ) քննում է ընտրական հանձնաժողովների վոչ ճիշտ գործողությունների վերաբերյալ դանդատները և դանդատների նկատմամբ ընդունում է վերջնական վորոշումներ.

գ) սահմանում է ընտրական արկղների նմուշները, «քվեարկելու իրավունքի վկայականի» ձևը, ընտրական բյուլետենների և նրանց ծրարների ձևն ու գույնը, ընտրողների ցուցակի ձևը, ձայները հաշվելու վերաբերյալ արձանագրությունների ձևը, ընտրվելու վերաբերյալ վկայականների ձևը.

դ) ցուցակագրում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար ընտրված պատգամավորներին.

յե) Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի մանդատային հանձնաժողովներին հանձնում է ընտրությունների գործավարությունը։

ՀՈԴՎԱԾ 37.—Յուրաքանչյուր միութենական և ինքնավար հանրապետության մեջ, ինքնավար մարզում և աղգային շրջանում ստեղծվում են Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական և ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի և աղգային շրջանի ընտրական հանձնաժողովներ։

ՀՈԴՎԱԾ 38.—Ազգությունների Խորհրդի ընտրություններին ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում

են միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների, ինքնավար մարզերի և ազգային շրջանների աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից, վոչ ուշ քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 39.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար մարզի և ազգային շրջանի ընտրական հանձնաժողովները կազմվում են նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 6—10 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 40.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի և ազգային շրջանի ընտրական հանձնաժողովը՝

ա) հանրապետության, ինքնավար մարզի, ազգային շրջանի տերիտորիայում հետևում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընթացքում «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» անշեղ կատարմանը.

բ) քննում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների վերաբերյալ վոչ ճիշտ գործողությունների նկատմամբ ստացված գանգատները։

ՀՈԴՎԱԾ 41.—Միության Խորհրդի ընտրությունների յուրաքանչյուր շրջանում ստեղծվում է Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 42.—Ցերկրային կամ մարզային բաժանում ունեցող հանրապետություններում Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում յերկրամասերի ու մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից, մարզային կամ յերկրային բաժանում չունեցող հանրապետություններում՝ հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների կողմից, վոչ ուշ քան ընտրություններից 55 որ առաջ։



ՀՈԴՎԱԾ 43.—Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 44.—Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) հետևում է աշխատավորների պատգամավորների Խորհուրդների համապատասխան գործադիր կոմիտեների կողմից ժամանակին ընտրական տեղամասեր կազմակերպելուն.

բ) հետևում է ընտրողների ցուցակները ժամանակին կազմելուն և ընդհանուրի գիտության հասցնելուն.

գ) ցուցակագրում է Միության Խորհրդի պատգամավորության թեկնածուներին, վորոնք առաջադրված են ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» պահանջները պահպանելով.

դ) Միության Խորհրդի ընտրությունների ընտրական բյուլետեններ և սահմանված ձևի ծրարներ է մատակարարում տեղամասերի ընտրական հանձնաժողովներին.

յե) հաշվում է ձայները և վորոշում ընտրությունների արդյունքները շրջանում.

զ) ընտրությունների վերաբերյալ գործավարությունը ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովին.

ե) ընտրված պատգամավորին վկայական և տալիս ընտրվելու վերաբերյալ։

ՀՈԴՎԱԾ 45.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար յուրաքանչյուր շրջանում ստեղծվում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողով։

ՀՈԴՎԱԾ 46.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատ-

վում են միութենական ու ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների Նախագահությունների և ինքնավար մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների կողմից, վոչ ուշ քան ընտրություններից 50 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 47.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 8 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 48.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը՝

ա) ԽՍՀՄ Սահմանադրության պահանջների և «ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» պահպանումով ցուցակագրում է Ազգությունների Խորհրդի պատգամավորության համար առաջադրված թեկնածուներին.

բ) Ազգությունների Խորհրդի ընտրությունների համար սահմանված ձևի ընտրական բյուլետեններ է մատակարարում տեղամասերի ընտրական հանձնաժողովներին.

գ) հաշվում է ձայները և վորոշում ընտրությունների արդյունքները շրջանում.

դ) ընտրությունների վերաբերյալ գործավարությունը ներկայացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովին և համապատասխան կերպով՝ Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետական ընտրական հանձնաժողովին կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին.

ե) ընտրված պատգամավորին վկայական է տալիս ընտրվելու մասին։

ՀՈԴՎԱԾ 49.—Տեղամասերի ընտրական հանձնաժողովները կազմվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների ներկայացուցիչներից և հաստատվում են՝ քաղաքներում աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդների կողմից, իսկ շրջանների բաժանված քաղաքներում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդների կողմից, գյուղական վայրերում՝ աշխատավորների պատգամավորների շրջանային խորհուրդների կողմից, վոչ ուշ քան ընտրություններից 40 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 50.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմվում է նախագահից, նախագահի տեղակալից, քարտուղարից և 4—8 անդամներից։

ՀՈԴՎԱԾ 51.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝

ա) ընտրական տեղամասում ընդունում է ընտրական բյուլետեններ.

բ) հաշվում է Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար տված ձայները.

գ) ընտրությունների գործավարությունը համապատասխան կերպով հանձնում է Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովներին։

ՀՈԴՎԱԾ 52.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Ազգությունների Խորհրդի ընտրությունների Հանրապետական ընտրական հանձնաժողովի, Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզերի և ազգային շրջանների ընտրական հանձնաժողովների, Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի, ինչպես և տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը համարվում են վավերական, եթե նրանց մասնակցում է հանձնաժողովների ընդհանուր կազմի կեսից ավելին։

ՀՈԴՎԱԾ 53.—Ընտրական հանձնաժողովներում բոլոր հարցերը վճռվում են ձայների հասարակ մեծամասնությամբ. ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը տալիս է գերակշռություն։

ՀՈԴՎԱԾ 54.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների հետ կապված ծախսերը կատարվում են պետության հաշվին։

ՀՈԴՎԱԾ 55.—Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Ազգությունների Խորհրդի ընտրությունների Հանրա-

պետական ընտրական հանձնաժողովները, Ազգությունների Խորհրդի ընտրությունների ինքնավար մարզի, ազգային շրջանի ընտրական հանձնաժողովները, Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը, Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ունեն իրենց կնիքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով։

ԳԼՈՒԽ 6.

## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 56.—Աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ կոմունիստական կուսակցական կազմակերպությունների, պրոֆեսիոնալ միությունների, կոոպերատիվների, յերիտասարդության կազմակերպությունների, կուլտուրական ընկերությունների և որենքով սահմանված կարգով ցուցակագրված մյուս կազմակերպությունների համար ապահովվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի թեկնածուներ առաջադրելու իրավունքը ԽՍՀՄ Սահմանադրության 141-րդ հոդվածի հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 57.—Թեկնածուներ առաջադրելու իրավունքն իրագործում են, ինչպես աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների կենտրոնական որգանները, այնպես և նրանց հանրապետական, յերկրային, մարզային և շրջանային որգանները, նմանապես ձեռնարկությունների բանվորների և ծառայողների, զորամասերի կարմիր-բանակայինների ընդհանուր ժողովները, ինչպես և կոլտնտեսություններում գյուղացիների, խորհտնտեսություններում բանվորների և ծառայողների ընդհանուր ժողովները։

ՀՈԴՎԱԾ 58.—Պատգամավորության թեկնածուները չեն կարող լինել Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովների, ինչպես և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ այն շրջանում, ուր նրանք առաջադրված են վորպես պատգամավորության թեկնածուներ։

ՀՈԴՎԱԾ 59.—Վոչ ուշ, քան ընտրություններից 30 որ առաջ աշխատավորների բոլոր այն հասարակական կազմակերպությունները կամ ընկերությունները, վորոնք թեկնածուներ են առաջադրում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար, պարտավոր են ցուցակագրել պատգամավորության թեկնածուներին համապատասխանորեն կամ Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովում կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովում։

ՀՈԴՎԱԾ 60.—Միության Խորհրդի ընտրությունների և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովները պարտավոր են ցուցակագրել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության բոլոր այն թեկնածուներին, վորոնք առաջադրվում են աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների կողմից, պահպանելով ԽՍՀՄ Սահմանադրության և «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» պահանջները։

ՀՈԴՎԱԾ 61.—Աշխատավորների այն հասարակական կազմակերպությունը կամ ընկերությունը, վորը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածու չե առաջադրում, պարտավոր է ներկայացնել շրջանային ընտրական հանձնաժողովին հետևյալ փաստաթղթերը՝

ա) պատգամավորության թեկնածու առաջարկող ժողովի կամ նիստի արձանագրությունը նախագահության անդամների ստորագրությամբ, ժամանակը, թեկնածու առաջադրող կազմակերպության անունը, նշելով պատգամավորության թեկնածու առաջադրող ժողովի կամ նիստի տեղը, ժամանակը և մաս-

նակցողների թիվն, ըստ վորում արձանագրության մեջ պետք է հիշատակվեն պատգամավորության թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, բնակության վայրը, կուսակցականությունը, զբաղմունքը.

բ) պատգամավորության թեկնածուի դիմումը, վոր նա համաձայն է քվեարկվելու իրեն առաջադրող կազմակերպության կողմից տվյալ ընտրական շրջանում։

ՀՈԴՎԱԾ 62.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միայն մեկ շրջանում։

ՀՈԴՎԱԾ 63.—Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի՝ պատգամավորության թեկնածուին ցուցակագրելու մերժումը կարելի է բողոքարկել 2 որվա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է։

ՀՈԴՎԱԾ 64.—Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի մերժումը ցուցակագրելու թեկնածուին՝ կարելի է բողոքարկել յերկու որվա ժամկետում միությունական, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին, իսկ վերջինի վորոշումը՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովին, վորի վորոշումը վերջնական է։

ՀՈԴՎԱԾ 65.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար ցուցակագրված յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը, տարիքը, զբաղմունքը, կուսակցականությունը և թեկնածուին առաջադրող հասարակական կազմակերպության անունը համապատասխան կերպով հրապարակում են Միության Խորհրդի ընտրությունների շրջանային և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը, վոչ ուշ քան ընտրություններից 25 որ առաջ։

ՀՈԴՎԱԾ 66.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության համար ցուցակագրված բոլոր թեկնածուները պետք է անպայման մտնեն ընտրական բյուլետենի մեջ։



ՀՈԴՎԱԾ 67.—Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը պարտավոր են, վոչ ուշ քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններից 15 որ առաջ տպագրել և ուղարկել տեղամասային ընտրական բոլոր հանձնաժողովներին ընտրական բյուլետեններ։

ՀՈԴՎԱԾ 68.—Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան ընտրական շրջանի բնակչության լեզուներով։

ՀՈԴՎԱԾ 69.—Ընտրական բյուլետենները տպագրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով և բոլոր ընտրողներին ընտրական բյուլետենների ժամանակարարումն ապահովող քանակությամբ։

339932

ՀՈԴՎԱԾ 70. Յուրաքանչյուր կազմակերպության, վորը շրջանային ընտրական հանձնաժողովում ցուցակագրված թեկնածու է առաջադրել, ինչպես և ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու իրավունք է վերապահվում անարգել ագիտացիա մղելու այդ թեկնածուի համար ժողովներում, մամուլում և այլ միջոցներով, ԽՍՀՄ Սահմանադրության 125-րդ հոդվածի համաձայն։

ԳԼՈՒԽ 7.

## ՔՎԵԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 71.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները կատարվում են ամբողջ ԽՍՀՄ համար մեկ ընդհանուր որվա ընթացքում։

ՀՈԴՎԱԾ 72.— ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների որը սահմանում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, ԽՍՀՄ Սահմանադրության 54-րդ հոդվածի համաձայն, վոչ ուշ քան ընտրությունների ժամկետից 2 ամիս առաջ։ Ընտրությունները կատարվում են վոչ աշխատանքային որը։

ՀՈԴՎԱԾ 73.—Ընտրություններից առաջ՝ վերջին 20 որվա ընթացքում ամեն որ տեղամասային ընտրական հանձնաժողովը հրապարակում կամ վորևե այլ ձևով լայն կերպով ծանուցում ե ընտրողներին ընտրությունների որը և տեղը։

ՀՈԴՎԱԾ 74.—Քվեարկությունը կատարվում ե ընտրությունների որը, առավոտյան ժամը 6-ից մինչև գիշերվա ժամը 12-ը։

ՀՈԴՎԱԾ 75.—Ընտրությունների որն առավոտյան ժամը 6-ին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ ստուգում ե քվեյատուփերը և ընտրողների՝ սահմանված ձևով կազմված ցուցակի առկայությունը, վորից հետո փակում ե տուփերը ու կնքում հանձնաժողովի կնիքով և հրավիրում ե ընտրողներին սկսել քվեարկությունը։

ՀՈԴՎԱԾ 76.—Յուրաքանչյուր ընտրող քվեարկում ե անձամբ, դրա համար ներկայանալով քվեարկության շենքը, ըստ վորում ընտրողները քվեարկում են ծրարի մեջ կնքված ընտրական բյուլետենները ձգելով քվեատուփերի մեջ։

ՀՈԴՎԱԾ 77.—Ընտրությունների շենքում բյուլետենները լցնելու համար հատկացվում է/մի հատուկ սենյակ, վորտեղ քվեարկության ժամանակ արգելվում ե վորևե մեկի, այդ թվում նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ներկայությունը, բացի քվեարկողներից։ Բյուլետեններ լցնելու սենյակը միաժամանակ մի քանի ընտրողներ թողնելու դեպքում, պետք ե սարքավորված լինի միջնորմներով կամ շիրմաներով, միաժամանակ թողնվող ընտրողների թվին համեմատ։

ՀՈԴՎԱԾ 78.—Ընտրական շենքը յեկող ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին ներկայացնում ե կամ անձնագիրը, կամ կոլտնտեսային գրքույկը, կամ պրոֆմիության գրքույկը, կամ ինքնության այլ վկայական, և ըստ ընտրողների ցուցակի ստուգվելուց և ընտրողների ցուցակում նշվելուց հետո, ստանում ե սահմանված ձևի ընտրական բյուլետեններ և ծրար։

ՀՈԴՎԱԾ 79.—Ներկա՝ «ԽՍՀՄ Միության Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրության» 15-րդ հոդվածի համաձայն, «քվեարկության իրավունքի վկայականով» ընտրությունների շենքը յեկած անձերի համար տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում ե մի հատուկ ցուցակ, վորը կցվում ե ընտրողների ցուցակին։

ՀՈԴՎԱԾ 80.—Ընտրական բյուլետենները լցնելու համար հատկացված սենյակում ընտրողը յուրաքանչյուր ընտրական բյուլետենում թողնում ե այն թեկնածուի ազգանունը, վորի ոգտին նա քվեարկում ե, ջնջելով մնացածներինը։ Կնքելով բյուլետենները ծրարի մեջ, ընտրողն անցնում ե այն սենյակը, ուր գտնվում ե տեղամասային ընտրական հանձնաժողովը և ծրարը ընտրական բյուլետեններով ձգում ե քվեյատուփը։

ՀՈԴՎԱԾ 81.—Այն ընտրողները, վորոնք անգրագետ լինելու կամ վորևե ֆիզիկական պակասի պատճառով հնարավորություն չունեն ինքնուրույն կերպով լցնելու ընտրական բյուլետենները, իրավունք ունեն ընտրական բյուլետենները լցնելու համար մի վորևե այլ ընտրողի հրավիրել այն սենյակը, ուր լցվում են ընտրական բյուլետենները։

ՀՈԴՎԱԾ 82.—Քվեարկության ժամանակ ընտրական շենքում չի թույլատրվում ընտրական ագիտացիա։

ՀՈԴՎԱԾ 83.—Ընտրական շենքում կարգ ու կանոնի համար պատասխանատու յե հանձնաժողովի նախագահը, և նրա կարգադրությունները պարտադիր են բոլոր ներկա գտնվողների համար։

ՀՈԴՎԱԾ 84.—Ընտրությունների որվա գիշերը, ժամը 12-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությունը հայտարարում ե ավարտված, և հանձնաժողովը սկսում ե բաց անել քվեյատուփերը։

ԳԼՈՒԽ 8.

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 85.— Այն շենքում, ուր տեղամասային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելու ժամանակ իրավունք ունեն ներկա գտնվելու հասարակական կազմակերպությունների և աշխատավորական ընկերությունների հատկապես դրա համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 86.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը, բացելով քվեյատուփերը, համեմատում է տրված ծրարների թիվը քվեարկությանը մասնակցող անձանց թվի հետ և համեմատության արդյունքները մայնում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 87.—Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը բացում է ծրարները և տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ հրապարակում է քվեարկության արդյունքները՝ ըստ ամեն մի բյուլետենի։

ՀՈԴՎԱԾ 88.—Քվեարկության արդյունքների զրանցումը կատարվում է առանձին-առանձին ըստ Միության Խորհրդի և ըստ Ազգությունների Խորհրդի ընտրությունների։

ՀՈԴՎԱԾ 89.—Պատգամավորության ամեն մի թեկնածուի համար 2 օրինակից հաշվեթերթ են կազմում տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը և այդ քանի համար լիազորված անդամները։

ՀՈԴՎԱԾ 90.—Անվավեր են համարվում այն բյուլետենները, վորոնք՝

ա) սահմանված ձևի ու գույնի չեն.

բ) տրված են առանց ծրարի կամ վոչ սահմանված ձևի ծրարով.

գ) ունեն ընտրվելիք պատգամավորների թվից ավելի թեկնածուներ։



ՀՈԴՎԱԾ 91.—Ընտրական բյուլետենի վավերականության վերաբերմամբ կասկած ծագելու դեպքում հարցը լուծում է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության միջոցով, վորը և նշվում է արձանագրության մեջ։

ՀՈԴՎԱԾ 92.—Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության արձանագրությունը կազմում է սահմանված ձևով՝ 3 օրինակից, վորոնք ստորագրվում են տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների, այդ թվում և անպայման նախագահի ու քարտուղարի կողմից։

ՀՈԴՎԱԾ 93.—Տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արձանագրության մեջ պետք է մատնանշվի՝

ա) քվեարկումն սկսելու և ավարտելու ժամանակը.

բ) ընտրողների ցուցակի համաձայն ձայն տված ընտրողների թիվը.

գ) այն ընտրողների թիվը, վորոնք ձայն են տվել «քվեարկելու իրավունքի վկայականներով».

դ) տրված ծրարների թիվը.

յե) այն հայտարարությունների ու գանգատների համառոտ բովանդակությունը, վորոնք տրված են տեղամասային ընտրական հանձնաժողովին, և տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները.

զ) ձայները հաշվելու արդյունքները ըստ ամեն մի թեկնածության։

ՀՈԴՎԱԾ 94.—Ձայները հաշվելը և արձանագրությունը կազմելն ավարտելուց հետո հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները հանձնաժողովի բոլոր անդամների ներկայությամբ։

ՀՈԴՎԱԾ 95.—Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության արձանագրության մի օրինակը, Միության Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների յերկու օրինակի հետ միասին, սուրհանդակի միջոցով 24 ժամվա ընթացքում ուղարկվում է Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովին. տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմած քվեարկության արձանագրության յեկրորդ

որինակը, Ազգությունների Խորհրդի պատգամավորության թեկնածուների հաշվեթերթիկների 2 որինակի հետ միասին, սուրհանդակի միջոցով 24 ժամվա ընթացքում ուղարկվում է Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 96.—Ընտրական բոլոր բյուլետենները (վավերական ճանաչվածներն առանձին և անվավեր ճանաչվածներն առանձին) Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի գծով առանձին-առանձին պետք է կնքվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքով և քվեարկության արձանագրության յերրորդ որինակի ու կնիքի հետ միասին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ձեռքով պիտի հանձնվեն պահելու՝ քաղաքներում—աշխատավորների պատգամավորների քաղաքային Խորհուրդներին, իսկ շրջանային բաժանում ունեցող քաղաքներում—աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդներին, գյուղական վայրերում—աշխատավորների պատգամավորների շրջանային Խորհուրդներին։

ՀՈԴՎԱԾ 97.—Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների վրա պարտք է դրվում պահել ընտրական բյուլետենները մինչև համապատասխան շրջանի պատգամավորների մանդատների հաստատումը ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի կողմից։

ՀՈԴՎԱԾ 98.—Շրջանային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա։

ՀՈԴՎԱԾ 99.—Այն շենքում, ուր շրջանային ընտրական հանձնաժողովը հաշվում է ձայները, հաշվելու ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեն աշխատավորների հասարակական կազմակերպությունների և ընկերությունների՝ հատկապես այդ բանի համար լիազորված ներկայացուցիչները, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչները։

ՀՈԴՎԱԾ 100.—Շրջանային ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի համար կազմում է 2 որինակ հաշվեթերթիկ, վորի մեջ նշվում է պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի ստացած ձայների քանակը։

ՀՈԴՎԱԾ 101.—Շրջանային ընտրական հանձնաժողովը կազմում է քվեարկության արձանագրությունը 2 որինակ, վորը ստորագրում են շրջանային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում նախագահը և քարտուղարն անպայման։

ՀՈԴՎԱԾ 102.—Շրջանային ընտրական հանձնաժողովի արձանագրության մեջ պետք է մատնանշված լինի՝

ա) շրջանի ընտրողների ընդհանուր թիվը.

բ) քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թիվը.

գ) պատգամավորության յուրաքանչյուր թեկնածուի համար տրված ձայների թիվը.

դ) Շրջանային ընտրական հանձնաժողովին տրված դիմումների և գանգատների համառոտ շարադրումը և շրջանային ընտրական հանձնաժողովի ընդունած վորոշումները։

ՀՈԴՎԱԾ 103.—Վոչ ուշ, քան ձայների հաշվումն ավարտելու՝ 24 ժամ հետո, Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը, ինչպես և Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր են արձանագրության առաջին որինակը, կցված հաշվեթերթերով, կնքած, սուրհանդակի միջոցով ուղարկել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, իսկ արձանագրության յերկրորդ որինակը՝ Ազգությունների Խորհրդի ընտրությունների միութենական հանրապետության, ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին։

ՀՈԴՎԱԾ 104.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության այն թեկնածուն, վորը ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն՝ շրջանում տրված և վավերական ճանաչված բոլոր ձայների կեսից ավելին, համարվում է ընտրված։

ՀՈԴՎԱԾ 105.—Արձանագրությունն ստորագրելուց հետո

Միության Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրությունների արդյունքները և ընտրված լինելու վկայական է տալիս Միության Խորհրդի պատգամավորության համար ընտրված թեկնածուին։

ՀՈԴՎԱԾ 106.—Արձանագրությունն ստորագրելուց հետո Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընտրությունների արդյունքները և ընտրված լինելու վկայական է տալիս Ազգությունների Խորհրդի պատգամավորության համար ընտրված թեկնածուին։

ՀՈԴՎԱԾ 107.—Եթե թեկնածուներից վոչ մեկը ձայների բացարձակ մեծամասնություն չի ստացել, համապատասխան շրջանային ընտրական հանձնաժողովն այդ մասին առանձնապես նշում է արձանագրության մեջ և հաղորդում կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետության, ինքնավար մարզի ու ազգային շրջանի ընտրական հանձնաժողովին և միաժամանակ հայտարարում է ձայների ամենամեծ քանակությունն ստացած 2 թեկնածուների վերաքվեարկում, ինչպես և նշանակում է վերաքվեարկման որը, վոչ ուշ քան ընտրությունների առաջին շրջանը լրանալուց 2 շաբաթ հետո։

ՀՈԴՎԱԾ 108.—Եթե շրջանում տրված ձայների քանակը այդ շրջանում քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների կեսից քիչ է, Միության Խորհրդի ընտրությունների կամ Ազգությունների Խորհրդի ընտրությունների շրջանային ընտրական հանձնաժողովը նշում է այդ մասին առանձնապես արձանագրության մեջ և անհապաղ հայտնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Ազգությունների Խորհրդի ընտրությունների հանրապետության, ինքնավար մարզի ընտրական հանձնաժողովին, ընդ վորում այդ դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություններ, վոչ ուշ քան առաջին ընտրություններից յերկու շաբաթ հետո։



ՀՈԴՎԱԾ 109.—Պատգամավորների թեկնածուների վերաքվեարկումը, ինչպես և անվավեր ճանաչված ընտրությունների փոխարեն նոր ընտրությունները կատարվում են ընտրողների՝ առաջին ընտրությունների համար կազմած ցուցակներով և լիովին համապատասխան ներկա «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Ընտրությունների Կանոնադրությանը»։

ՀՈԴՎԱԾ 110.—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալու դեպքում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը 2 շաբաթվա ժամկետում համապատասխան ընտրական շրջանում նոր պատգամավորի ընտրությունների ժամկետ է նշանակում, բայց վոչ ուշ, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կազմից պատգամավորի դուրս գալուց 2 ամիս հետո։

ՀՈԴՎԱԾ 111. Ամեն վոք, ով բռնության, խաբեբայության, սպառնալիքների կամ կաշառքի միջոցով կխանգարի ԽՍՀՄ քաղաքացուն իրագործելու ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի համար ընտրելու և ընտրվելու իր իրավունքը,—պատժվում է ազատազրկումով մինչև 2 տարի ժամկետով։

ՀՈԴՎԱԾ 112.—Խորհրդի պաշտոնատար անձնավորությունը, կամ ընտրական հանձնաժողովի անդամը, վորը կեղծել է ընտրական փաստաթղթերը կամ դիտավորյալ կերպով ճիշտ չի հաշվել ձայները, պատժվում է ազատազրկումով մինչև 3 տարի ժամկետով։

ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Կենտգործկոմի քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ 7-րդ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ 4-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ . . . . . 2

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ընտրական սիստեմը . . . . . 3
2. Ընտրողների ցուցակները . . . . . 4
3. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ընտրական շրջանները . . . . . 6
4. Ընտրական տեղամասերը . . . . . 7
5. Ընտրական հանձնաժողովներ . . . . . 8
6. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորության թեկնածուներ առաջադրելու կարգը . . . . . 14
7. Քվեարկման կարգը . . . . . 17
8. Ընտրությունների արդյունքների վորոշումը . . . . . 20

Թարգմանությունը խմբագրեց՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Տեխնիկական խմբագիր և սրբագրիչ՝ Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ

Հանձնված է արտադրության 8/IX—1937 թ.
Ստորագրված է տպագրության 16/IX—1937 թ.
Կուսհրատ № 62. պատվեր № 1646
Տիրաժ 4000, թղթի չափը 82x110
Գրքի չափը $5^1/_2$x9, գրքի ծավալը՝ $1^3/_4$ տպ. թերթ։
Գլավլիտի լիազոր № 19785։

ՀՍՍՀ (բ) Ի Կենտկոմի Կուսհրատի տպարան—Թբիլիսի

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ - РТ.СССР
Մասնաճյուղ
Մեծամասնության ՊՄԳ

ՀՀ Ազգային գրադարան
NL0195300

Գրքի
50
կոպ.

37-660

# ПОЛОЖЕНИЕ О ВЫБОРАХ В ВЕРХОВНЫЙ СОВЕТ СССР

(На армянском языке)

Второе издание

ПАРТИЗДАТ ЦК КП (б) Гр.
Тбилиси 1937